ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____»_____2023թ. **N------Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» N 405-Ն որոշման հավելվածը 7-րդ կետի 11-րդ ենթակետից հետո լրացնել նոր 12-րդ ենթակետով.

« 12) արտաքին ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (մոնտաժման, վերակառուցման, վերատեղադրման, տեղափոխման, վերանորոգման, վերականգման և այլն) նպատակով համաձայնեցված հետագիծ-նախագծային փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվությամբ իրականացվող քանդման և վերականգնման աշխատանքների ժամանակ կառուցապատողը պարտավոր է իրականացնի հետևյալ միջոցառումները.

ա. համայնքի ղեկավարի համաձայնեցմանը ներկայացվող հետագիծ-նախագծի հետ որպես անբաժանելի մաս կազմել աշխատանքների իրականացման տարածքի կահավորման սխեման, որն իր մեջ ներառում է հետևյալ պարտադիր տարրերը՝ աշխատանքների իրականացման ողջ տարածքում՝ հանդիպակաց դասավորությամբ տեղադրված տակդիրով և կանգնակով ցուցատախտակի միջոցով՝ տեսանելի վայրերում ապահովել կատարվող աշխատանքների իրազեկումը (մատակարար և կապալառու կազմակերպությունների տվյալների նշումով, այդ թվում՝ տարբերանշան, հասցե, հեռախոսահամար, աշխատանքների անվանումը և նպատակը, կատարման ժամկետի սկիզբը և ավարտը), քանդվող տարածքի բոլոր կողմերի երկայնքով ստեղծել արգելափակող գոտի՝ օգտագործելով մետաղական ճաղավանդակներից կամ կանգնակով ամրացվող ժապավենային նյութերից ստեղծված ժամանակավոր պատնեշներ, դրանց վրա

տեղադրելով համապատասխան լուսանդրադարձիչ նյութեր կամ լուսատու սարքեր՝ գիշերային և մութ ժամերին երթևեկության ու հետիոտնի տեղաշարժի անհրաժեշտ անվտանգությունն ապահովելու համար:

Սույն պարբերությամբ նախատեսված կահավորումն անհրաժեշտ է պահպանել մինչև տարածքը նախկին տեսքի բերելու աշխատանքների ավարտը,

բ. փողոցի երթևեկելի պաստառի, այդ թվում՝ մայթի, և (կամ) հրապարակի հատվածի բակային տարածքի, այգիների և պուրակների արահետների քանդում, գրունտի հանում և միաժամանակ սահմանված կարգով տեղափոխում նախատեսված վայր (աղբավայր), բացառելով գրունտային հանույթով հետլիցքի կատարումը,

գ. փողոցի երթևեկելի պաստառի, այդ թվում՝ մայթի, և (կամ) հրապարակի բակային տարածքների, այգիների և պուրակների հատվածի հատման դեպքում այն կրկնակի չհատելու նպատակով տարանցիկ խողովակաշարի տեղադրում՝ հետագայում կոմունիկացիաներ անցկացնելու համար,

դ. փողոցների երթևեկելի հատվածներում երկայնական քանդումների դեպքում, մալուխագծի և (կամ) խողովակաշարի տեղադրման և հողային պաստառի և ասֆալտբետոնյա ծածկի առաջին փուլի ամբողջական վերականգնման աշխատանքները ավարտել քանդված տարածքի ամբողջ ծավալով,

ե. փողոցների երթևեկելի հատվածի լայնակի հատումների դեպքում նույն օրվա ընթացքում ամբողջությամբ վերականգնել և նախկին տեսքի բերել քանդված հատվածը: Բացառել ցանկացած տևողությամբ ժամանակահատվածում չվերականգնված հատվածի առկայությունը՝ երթևեկի ժամանակ,

զ. փողոցի, մայթի, հրապարակի, բակերի այգիների և պուրակների քանդված հատվածներում խրամուղիների վերականգնման համար նախատեսված շինանյութերը (ավազ, խճաքար և այլն) պարտադիր ծածկել գետնին ամրացված ծածկոցներով: Բացառել շինարարական աղբի կուտակումը: Քանդման աշխատանքներից հետո, անմիջապես նույն օրը, ապահովել շինարարական աղբի տեղափոխումը շինարարության թույլտվությամբ ամրագրված վայր,

է. փողոցներում, մայթերին, բակային տարածքներում և այգիներում ասֆալտբետոնյա ծածկի հատումն իրականացնել բացառապես սղոցով: Քանդված հատվածները նախկին տեսքով վերականգնելիս խրամուղիների վնասված եզրերը բերել երկրաչափական տեսքի՝ ներառելով խրամուղու չափերից դուրս վնասված հատվածները,

ը. փողոցների երթևեկելի պաստառի, այդ թվում՝ մայթի և (կամ) հրապարակի, բակային տարածքների վերականգնում նախկինում եղած ճանապարհածածկի շերտերի հզորությամբ (հաստությամբ) ճանապարհածածկի, մայթերի, հրապարակների, բակերի և այլ ընդհանուր օգտագործման տարածքների հողային պաստառների վերականգնման ընթացքում խրամուղիներում տեղադրված ավազի զանգվածի յուրաքանչյուր 15սմ շերտի վրա պարտադիր իրականացնել վիբրացիոն տոփանում: Փողոցների երթևեկելի հատվածներում, հրապարակներում, բակերում, վերջին շերտի խճածածկի և

ասֆալտբետոնյա ծածկի տոփանումը իրականացնել առնվազն 5 տոննա վիբրացիոն գլդոնով: Մայթերի վրա այգիներում և պուրակներում վերջին շերտի տոփանումը իրականացնել 2 տոննա վիբրացիոն գլդոնով,

թ. հրապարակների, մայթերի, բակերի, այգիների, պուրակների տարածքներում սալիկապատ հատվածների վերականգնման ընթացքում հողային պաստառի, ավազաշերտի ամրացումն իրականացնել վիբրացիոն տոփանումով: Սալիկապատ հատվածների վերականգնման ընթացքում բացառել այլ նյութերի (բետոնի և ասֆալտբետոնի) օգտագործումը,

ժ. փողոցների երթևեկելի հատվածի պաստառի, այդ թվում՝ մայթի, բակային տարածքի, հրապարակի, այգիների և պուրակների արահետների վերականգնում նախկինում եղած ճանապարհածածկի շերտերի հզորությամբ (հաստությամբ), իսկ եթե մայթը, հրապարակը, այգին և բակը եղել են սալիկապատ, ապա սալիկապատ հատվածի վերականգնում՝ նախկին վիճակով: Սույն պահանջները ամբողջությամբ չեն պահպանվում զուտ հողային աշխատանքների կատարման դեպքում,

ժա. փողոցների երթևեկելի հատվածներում շինարարական աշխատանքների իրականացման համար նախապես գրավոր իրազեկել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայությանը՝ միաժամանակ համաձայնեցնելով յուրաքանչյուր հատվածի աշխատանքների իրականացման օրերն ու ժամերը: Շինարարական աշխատանքները սկսելուց երկու օր առաջ, ըստ անհրաժեշտության, ակնառու դիրքում տեղադրված ցուցականով ազդարարել փողոցի տվյալ հատվածում մեքենաների կայանման արգելման մասին՝ նշելով օրերն ու ժամերը,

ժբ. Փողոցների, մայթերի, բակերի քանդված ասֆալտբետոնյա ծածկի վերականգնումից առաջ կառուցապատողը կամ նրա ներկայացուցիչը պարտավոր է համապատասխան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ներկայացուցչին ներկայացնի ասֆալտբետոնյա ծածկի հատիկակազմի և խտության վերաբերյալ լաբորատոր եզրակացությունը,

ժգ. կառուցապատողը պարտավոր է անհետաձգելի (վթարների վերացում) և ոչ անհետաձգելի վերականգնողական աշխատանքների ընթացքում յուրաքանչյուր օր պարբերաբար մաքրել և լվանալ տարածքը, բացառել փոշու տարածումը: Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել ամբողջ տարածքի սանիտարական մաքրումը,

ժդ. շինարարության թույլտվություն չպահանջող վթարների վերացման ժամանակ անհետաձգելի աշխատանքների կատարումից հետո տարածքները վերականգնել նախկին տեսքով՝ սույն կարգի բոլոր պահանջներին համապատասխան և վերականգնել պետությանը կամ համայնքին պատկանող հողամասի կամ ընդհանուր օգտագործման տարածքի նախկին վիճակը մինչև շինարարական աշխատանքների կատարման թույլտվության ավարտը, որտեղ կատարվել են աշխատանքները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ հաստատվել է քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը:

Հաստատված կարգում սահմանված լրացուցիչ պայմանները հիմնականում վերաբերում են ճարտարապետահատակագծային առաջադրանքի (նախագծման թույլտվության) հիման վրա տրված շինարարության թույլտվությամբ իրականացվող աշխատանքներին:

Մինչդեռ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանարապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 19.03.2015թ. հ.596 որոշման 23 և 23.1 կետերի համաձայն ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (մոնտաժման, վերակառուցման, վերականգնման, վերանորոգման, վերատեղադրման, տեղափոխման և այլն) աշխատանքները իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող կառուցապատողները իրականացնում են համաձայնեցված հետագիծ-նախագծի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվությամբ, բացառությամբ ընթացիկ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների:

Հաշվի առնելով ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման աշխատանքների իրականացման առանձնահատկությունները և պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներին (հողամաս, փողոց, մայթ, արահետ, այգի, պուրակ, հրապարակ, բակ և այլն) պատճառվող վնասներից խուսափելու անհրաժեշտությունը, լրացուցիչ պայմաններ պետք է առաջադրվեն նաև ենթակառուցվածքների (էներգոմատակարարում, գազամատակարարում, ջրամատակարարում և ջրահեռացում, կապ) ստեղծման շինարարության թույլտվություն ունեցող կառուցապատողների նկատմամբ:

Ինժեներական ենթակառուցվածքների ստեղծումը հանդիսանալով շինարարության թույլտվություն պահանջող գործունեություն, անհրաժեշտ է, որ

դրանց կառուցապատողների նկատմամբ ևս կիրառելի լինեն վարչական պատասխանատվության նորմեր: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 157.15 հոդվածի պահանջները ամբողջությամբ կիրառելի չեն ինժեներական ենթակառուցվածքների կառուցապատողների նկատմամբ, քանի որ դրանց ներկայացվող լրացուցիչ պայմանները ներառված չեն Երևանի ավագանու 16.03.2012թ. հ.405 որոշման մեջ:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, քաղաքաշինական լրացուցիչ պայմանների միասնականությունը և վերահսկողական գործառույթի արդյունավետությունը ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել Երևանի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշման մեջ կատարել համապատասխան լրացումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ